



Հեռու եւ մօտիկ աշխարհ մը՝ Զարմանազան

Սարին Ագապաշ

Այս ամառ առիթ ունեցայ մասնակցելու Գալուստ Կիւպէնկեան հիմնարկութեան Հայկական բաժանմունքին կողմէ 2017 թուականին ստեղծուած «Զարմանազան» ամառնային ծրագրին, որ համաճարակին պատճառաւ երկրորդ անգամ առցանց տեղի ունեցաւ ու ստացաւ «Զարցանց» անուանումը: Այս ծրագրին մասնակցելէ առաջ քիչ տեղեկութիւն ունէի նախագիծի բովանդակութեան մասին: Գիտէի, որ հեռուն՝ հրաշալի բաներ կը պատահէին ու անմոռանալի փորձառութիւններ կը կերտուէին: Վերջապէս այս ամառ ե՛ս ալ առիթ ունեցայ այս աշխարհէն ներս անցագիր մը ստանալու:

Զարցանցին մէջ մասնակիցներու զանազան խումբեր կային: 10-էն 17 տարեկաններ, 18-էն 24 տարեկաններ եւ «ուսանողներ»: Ես ուսանողներու խումբին մէջն էի Սփիւռքի զանազան դպրոցներուն մէջ պաշտօնավարող հայերէնի ուսուցչուհիներուն հետ: Զարցանցին մէջ առիթ ունեցանք պատանիներու եւ երիտասարդներու համար ծրագրուած յատուկ աշխատանոցներուն մասնակցելու եւ զանոնք դիտարկելու: Նաեւ լեզուի ուսուցման եւ իրացման մասին տեսական դասեր ունեցանք Անի Կարմիրեանին ու Էյմի Հիւզին հետ: Մենք՝ ուսուցիչներու խումբս առիթ ունեցանք Զարմանազանի հիմնական փիլիսոփայութեան եւ մեթոտաբանութեան ծանօթանալու, նաեւ տեսնելու, թէ այս հիմնական մօտեցումները ինչպէ՛ս կարելի է գործադրել նոյն նախագիծին ընթացքին: Աւելին՝ սկսանք մտածել միջոցներ ստեղծելու մասին, որոնց շնորհիւ պիտի կարենայինք մեր դասարաններէն ներս կիրարկել նոյն մօտեցումները:

Լեզուի իրացումը հրաշալի ընթացք մըն է, մինչեւ որ ուսուցիչները եւ դպրոցը զայն մղձաւանջի մը վերածեն: Հայերէնի դասաւանդութեան պարագային ալ կը շարունակուի նոյն մղձաւանջը, նոյնիսկ քիչ մը աւելի սաստկանալով: Այս ամառ, բոլորս տեսանք, թէ կարելի է այս ընթացքը երազային պահերու վերածել, ուր խաղն է կարելորդ, խաղալն է, զուարճանալ ու խնդալն է: Լեզուն այս բոլորին միջոցն է: Ականատես եղանք, որ կարելի է միջավայր մը ստեղծել, ուր առանց «հայերէն խօսէ՛»-ներու լեզուն կ'ապրի: Հայերէնը



խաղի լեզուն է, խաղալու լեզուն, զուարճանալու եւ խնդալու լեզուն: Ան բոլորիս կը պատկանի, սակայն ոչ մէկուս ձեռքը կը մնայ ցկեանս: Անկայուն է, խանդավառ է եւ պատրաստ է աճելու: Չի գոհանար միայն ուսուցչին ձեռքը ըլլալէ, կ'ուզէ զանազան միտքեր այցելել, այդ միտքերով թռիչքներ կատարել: Այնքան ատեն որ մենք չենք շղթայեր զայն, ան պատրաստ է բոլորիս համար հրաշալի փորձառութիւններ կերտելու: Ինծի համար այս հրաշալի փորձառութիւնը Զարցանցն էր:

Տեսայ, թէ որքա՛ն խանդավառ են երախաները ստեղծագործելու ժամանակ: Չեն վախնար լեզուէն, կը գրեն, կը խօսին, կը գծեն, կը խաղան եւ կը կառուցեն: Առանց կարմիր մատիտներու, սրբագրողներու կամ նիշերու որքա՛ն ազատ եւ հանգիստ են: Հայերէնով կը ծանօթանան զանազան աշխարհներու հետ, կը զրուցեն այդ աշխարհներու եւ տարբեր մշակոյթներու մասին, չի բաւեր, կը ստեղծեն զանազան աշխարհներ: Կը հնարեն նոր բառեր, կը գործածեն զանոնք, առանց վախնալու, թէ բառարանին մէջ գոյութիւն չունեցող բառեր են անոնք: Կ'ուզեն իւրացնել լեզուն, կը բռնեն անոր ձեռքէն միասնաբար ու կը զետեղեն զայն ճիշդ շրջանակին մէջտեղը՝ խաղավայրին մէջ:

Երբ դասարանին մէջ լեզուական կատակ մը կ'ընէինք, «խաղի մի՛ վերածէք» կ'ըսէր մեր ուսուցիչը: Շա՛տ ափսոս: Մինչդեռ այս ամառ նկատեցինք, որ խաղի վերածելով է, որ լեզուն կ'ապրի, տեղ կը գտնէ առօրեային մէջ: Նախ խաղին լեզուն կ'ըլլայ, յետոյ ընկերային շրջանակին եւ յետոյ նոյնիսկ նոր աշխարհներուն եւ երազներուն: Կը բաւէ, որ առիթ տանք այս բոլորին իրականացման:

Անի Կարմիրեանը հարցադրումով մը սկսած էր իր դասընթացքը՝ «լեզուն սորվի՞լ, թէ՞ ապրիլ»: Կարծեմ շա՛տ յստակ է: Հիմա նորանոր ակնոցներ ունիմ, զանազան գոյներով: Մտային պղպջակներս զանազան ձեւերով են, միայն քառակուսիներ չկան: Լեցուն պայուսակս շալկած հրաժեշտ կու տամ Զարցանցի այդ աշխարհին: Յոյսս ալ քովս է եւ այս աշխարհը կերտել բնա՛ւ դժուար չէ:

«Նոր Յառաջ», 6 նոյեմբեր 2021, էջ 6